

ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՎԻԼՍՈՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԲԱԶՄԱՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԴԱՇՏԻ ՆԱԽԱԳԻԾ

ՈՒՄ՝	Գործակալություններին, կազմակերպություններին և հետաքրքրված կողմերին ԱՄՍԱԹԻՎ ՝ հունիսի 25, 2020թ.
ՈՒՄԻՑ՝	Գլենդեյլի Համայնքային Ծառայությունների և Զբոսայգիների Բաժնից (Գլխավոր գործակալություն)
ԹԵՄԱՆ՝	Վիլսոնի միջնակարգ դպրոցի բազմանպատակային դաշտի նախագծի համար շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին զեկույցի նախագծի (անգլ. հապավումը՝ DEIR) հասանելիության մասին ծանուցում

ՍՈՒՑՆՈՎ ԾԱՆՈՒՑՎՈՒՄ Է, ՈՐ Գլենդեյլի քաղաքապետարանը, որպես առաջատար գործակալություն, պատրաստել է շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին զեկույցի նախագիծ (DEIR)՝ բազմանպատակային դաշտի նախագծի համար (առաջարկվող նախագիծ)՝ Հանրային ռեսուրսների օրենսգրքի 21165 բաժնի և Կալիֆորնիայի շրջակա միջավայրի որակի մասին ակտի համաձայն (CEQA ուղեցույցներ): Սույն ծանուցման նպատակն է՝ 1) ծառայել՝ որպես DEIR-ի հասանելիության մասին ծանուցում՝ համաձայն CEQA-ի Ուղեցույցների 15087 բաժնի և 2) ստանալ DEIR-ի բովանդակության վերաբերյալ մեկնաբանություններ:

ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՆԱԳԻՐԸ՝ Վիլսոնի միջնակարգ դպրոցի բազմանպատակային նախագիծ

ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԺԱՄԿԵՏ՝ 2020 թ. հունիսի 25-ից մինչև 2020 թ. օգոստոսի 24-ը

ՊԱՏԱՄԽԱՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Քաղաքապետարանը կպատասխանի առաջարկվող նախագծի վերաբերյալ բոլոր գրավոր մեկնաբանություններին: **Խնդրում ենք** ուղարկել Ձեր պատասխանները և մեկնաբանությունները Peter Vierheilg-ին՝ ծրագրի ղեկավարին՝ Գլենդեյլի քաղաքապետարանի համայնքային ծառայությունների և զբոսայգիների բաժին: Փոստային հասցեն՝ Գլենդեյլի քաղաքապետարանի համայնքային ծառայությունների և զբոսայգիների բաժին, 613 East Broadway, Գլենդեյլ, Կալիֆորնիա 91206, կամ՝ էլ. փոստի միջոցով՝ PVierheilg@Glendaleca.gov, հետևյալ թեմայի վերնագրով՝ **«Wilson Middle School Multi-Purpose Project»/ «Վիլսոնի միջնակարգ դպրոցի բազմանպատակային նախագիծ»:** Խնդրում ենք ուղարկած բոլոր պատասխանների մեջ ներառել կոնտակտային անձի անունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ: Քաղաքապետարանը կանցկացնի վիրտուալ համայնքի ժողով՝ առաջարկվող նախագիծը և EIR նախագիծը ներկայացնելու համար՝ 2020 թ. օգոստոսի 13-ին, երեկոյան ժամը 6:30-ին: Հանդիպմանը մասնակցելու համար խնդրում ենք հաստատել պատասխան նամակով՝ PVierheilg@Glendaleca.gov հասցեին:

ՆԱԽԱԳԾԻ ՎԱՅՐԸ: Վիլսոնի միջնակարգ դպրոցի (անգլ. հապավումը՝ WMS) կամպուսը գտնվում է 1221 Monterey Road հասցեում՝ Կալիֆորնիայի Գլենդեյլ քաղաքի հյուսիսարևելյան հատվածում: Վիլսոնի միջնակարգ դպրոցի բազմանպատակային դաշտի նախագիծը (առաջարկվող նախագիծը) կբաղեցնի մոտավորապես 3.85 ակր՝ բաղկացած լինելով գոյություն ունեցող մարզական դաշտից և բասկետբոլի դաշտերից՝ Վիլսոնի միջնակարգ դպրոցի կամպուսի հյուսիսային մասում: Վիլսոնի միջնակարգ դպրոցի կամպուսը հյուսիսում սահմանակից է Գլենոքս բուլվարին, հարավում՝ Մոնտերեյի ճանապարհին, արևելքում՝ Վերդուգո ճանապարհին, և արևմուտքում՝ Ադամս փողոցին: Առաջարկվող նախագծի տեղանքն ունի գոտիավորման R1 նշում՝ որպես ցածր խտության բնակելի տարածք, և ընդհանուր պլանի հանրային/կիսահանրային նշում: Նախագծի տեղանքը նշված չէ բնապահպանական տվյալների բազայում, որը կազմվում է Կառավարության օրենսգրքի 65962.5 բաժնի համաձայն:

ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: Առաջարկվող նախագիծը կհանգեցնի գոյություն ունեցող խոտի դաշտի եւ հարթեցված բասկետբոլային դաշտերի վերաձևավորմանը, որտեղ կլինի համատեղ օգտագործման

ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

բազմանպատակային, սինթետիկ, բոլոր եղանակների համար նախատեսված մարզադաշտ՝ ֆուտբոլի, ամերիկյան ֆուտբոլի և լակրոսի գծանշված դաշտերով, հինգ շարքով, ցանկացած եղանակին հարմար վազքովիով, կլինեն ֆիթնեսի սարքավորումներ, պարագծով արված անվտանգության ցանկապատեր՝ անձնական գաղտնիության պահպանմամբ, սանհանգույց և պահեստ/պահեստավորման շենք(եր), քայլուղիներ, կանաչապատ տարածք, ռոտոլում, գոյություն ունեցող բասկետբոլի դաշտի մակերեսի վերադասակարգում և սպորտային դաշտի լուսավորություն: Առաջարկվող նախագիծը կօգտագործի ներկա փողոցը և տարածքի կայանատեղին: Տարածքի մուտքի կամ կայանատեղի ոչ մի փոփոխություն չի լինի:

Առաջարկվող նախագիծը թույլ կտա երեկոյան ժամերին ավելի երկար օգտագործել Նախագծի տեղանքը՝ դրսի մարզական խմբերի կողմից: Քաղաքապետարանի կողմից առաջարկվող դաշտի օգտագործումը կլինի երկուշաբթիից ուրբաթ՝ երեկոյան ժամը 5:00-ից մինչև 10:00, և շաբաթ և կիրակի օրերին՝ առավոտյան ժամը 8:00-ից մինչև երեկոյան 10:00: Քաղաքապետարանը տեղում կունենա Համայնքային ծառայությունների և զբոսայգիների բաժնի աշխատող՝ թույլատրված դաշտի ժամերին, երբ դպրոցը չի գործում: Մշտական աթոռներ կամ նստարաններ, ցուցատախտակներ կամ ուժեղացված ձայնային համակարգեր չեն առաջարկվում:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ: DEIR-ի վերլուծությունը որոշեց, որ առաջարկվող նախագիծը կհանգեցնի գեղագիտական (լուսավորության) և շինարարության հետ կապված աղմուկի էական անխուսափելի բացասական ազդեցության: DEIR-ը ներառում է մեղմացման միջոցառումներ՝ ապահովելու, որ առաջարկվող նախագիծը շրջակա միջավայրի վրա որևէ էական, բացասական ազդեցություն չունենա: Օդի որակի, ջերմոցային գազերի արտանետումների, էներգիայի և տրանսպորտի հետ կապված ազդեցությունները գնահատվել են ավելի պակաս նշանակության:

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ: DEIR նախագիծը հասանելի է հանրային վերանայման համար հետևյալ վայրերում՝

- Գլենդեյլի քաղաքապետարանի համայնքային ծառայությունների և զբոսայգիների կայքէջ՝ www.glendaleca.gov/wilsonfield
- Գլենդեյլի Միացյալ Դպրոցական Շրջանի վեբկայք՝ www.gusd.net/wilsonfield

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապվել Peter Vierheilig-ի հետ՝ pvierheilig@Glendaleca.gov հասցեով: